

## 1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

### 1.1. Համախառն ներքին արդյունքի ցուցանիշը

#### 1.1.1.2001թ. հունվար-ապրիլի ՀՆԱ ցուցանիշը

Հանրապետությունում 2001թ. հունվար-ապրիլին համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) արտադրությունը կազմել է 206056.0 մլն.դրամ, որը գերազանցել է 2000թ. համապատասխան ժամանակաշրջանի մակարդակը 21258.9 մլն.դրամով: ՀՆԱ-ի աճի տեմպը ընթացիկ տարվա հունվար-ապրիլին 2000թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ կազմել է 108.5%, 2000թ. հունվար-ապրիլի 100.3 % աճի դիմաց:

Ի տարբերություն 2000թ. հունվար-ապրիլի, որտեղ արձանագրվել է տնտեսության առաջատար ճյուղերի աճի տեմպի իջեցում, 2001թ. հունվար-ապրիլին այդ ճյուղերն ապահովել են շուկայական գներով ՀՆԱ-ի հավելաճի 64%-ը: Այսպես, 2000թ. հունվար-ապրիլի համեմատությամբ ավելացված արժեքի աճը կազմել է՝ արդյունաբերության ճյուղում՝ 107.8%, 2000թ. հունվար-ապրիլի 99.1% աճի դիմաց, շինարարության ճյուղում, համապատասխանաբար՝ 106.1 և 84.1%, գյուղատնտեսության ճյուղում՝ 101.9 և 99.6%, առևտրի և հանրային սննդի ճյուղում՝ 114.4 և 108.4%, տրանսպորտի և կապի ճյուղում՝ 108.5 և 101.2 %:

Դրա հետ մեկտեղ, հարկ է նշել, որ 2001թ. հունվար-ապրիլին, նախորդ երեք ամիսների համեմատությամբ, արձանագրվել է ՀՆԱ աճի տեմպի դանդաղում, ինչը մեծիմասամբ պայմանավորված է նրանով, որ ապրիլին ՀՆԱ-ի կազմում ներառվող անուղղակի հարկերի մուտքերը մարտ ամսվա համեմատությամբ նվազել են 35 %-ով: Միաժամանակ արձանագրվել է ձեռնարկություններին և կազմակերպություններին տրամադրվող սուբսիդիաների զգալի աճ: